թ. Կարինի ժողովում Եզր Փառաժնակերտցի կաթողիկոսի հեռանալը ուղղափառ դաւանութիւնից: Ընդ որում բուն ժողովը նա հանում է Հայոց ժողովների թուարկման շարքից՝ այդպիսով Մանազկերտին ժողովն անուանելով հերթական՝ եօթերորդ թուահամարով:

Գրականութեան մէջ կարծիք է արծարծուել, թէ «Սակս ժողովոցն» երկը չի կարող լինել (գոնէ Անտոնեանց գրչագրում մեզ հասած վիճակում) Յովհաննէս Օձնեցու հարազատ ստեղծագործութիւնը (չնայած գրողի ուղղակի հաւաստիացումներին. հմմտ. «Ահաւասիկ ես՝ Յովհաննէս Հայոց կաթուղիկոս, գրեցի իմով ձեռամբ զայս կանոնս...»), քանի որ նրա շարադրանքը որոշ անփութութեան եւ խառնափնթորութեան տարրեր է պարունակում, ինչը չի կարող բնորոշ լինել գիտնական հայրապետին: Սակայն իրականում նման մտայնութիւնը գալիս է երկի ոչ ուշադիր ընթերցանութիւնից եւ միայն հպանցիկ հայեացքից առաջացող նրա շտապողական գնահատականից՝ իբրեւ հէնց միայն ժողովների մասին պատմական աշխատութիւն: Այդ թեթեւ մօտեցումից վերանալու դէպքում շարադրանքի լեզուի եւ ոճի ակնառու համապատասխանութիւնը Օձնեցու մնացեալ երկերին այլեւս չի կարող անկարեւոր համարուել:

Անհրաժեշտ է լրջօրէն արձանագրել, որ Մանազկերտի ժողովի հիմնական դաւանական խնդիրը հանգամանալիօրէն ներկայացնելուց յետոյ հեղինակը բաւական մանրամասն մտքեր է շարադրում եօթ (կամ ութ), այսպէս ասած, կանոնակարգային խնդիրների մասին, որոնք ինչ-որ չափով նմանւում են ընդարձակ մեկնաբանուած կանոնական դրոյթների: Այդպիսի հեղինակային մօտեցում նկատւում է նաեւ Յովհաննէս Օձնեցու մէկ այլ՝ «Ատենաբանութիւն» անուանուած երկում, որտեղ նոյնպէս շուրջ մէկուկէս տասնեակ կանոնական դրոյթներ շարադրուած են ընդարձակ մեկնաբանուած տարբերակով եւ դրանց յաջորդում են բուն կանոնները՝ թուով երեսուներկու: Ըստ այսմ, նախ եւ առաջ՝ աւելի հաւանական է կանգ առնել այն գնահատականի վրայ, թէ «Սակս ժողովոցն» գրուածքն իր այսպիսի իւրայատուկ կառուցուածքով ու ձեւով, թերեւս, սկիզբը եւ խթանն է եղել սեփական կանոնախումբ շարադրելու հեղինակի գաղափարի՝ ներառելով այն (նախադիր «Ատենաբանութեան» հետ միասին) «Կանոնագիրք Հայոց» վիթխարի ժողովածոյի մէջ, որի համախմբումն ինքն սկսել էր դեռեւս կաթողիկոսական ձեռնադրութիւնն ընդունելուց առաջ: Վերջին հանգամանքը պարզ երեւում է նրա Յիշատակարանի յայտնի վկայութիւնից. «...կամեցայ զբովանդակ զառ ի նոցանէն կանոնական սահմանեալ բան ի միում տեղւոջ գեղեցկագործ մատենիւ ի հայրապետանոցի աստ արմատացուցանել: Ուրանաւր եւ զիս աստուածային Հոգին վերակարգեաց յաթոռ սրբոյն Գրիգորի, ի կաթողիկոսութիւն աշխարհիս Հայոց՝ Յովհաննէս՝ նուաստագոյն յիմաստասիրականաց խմբից...»:

Բացի այդ, անհրաժեշտ է նկատել, որ «Սակս ժողովոցն»-ը իր անմիջական ու անպաճոյճ ոճով, շարադրանքի՝ բանաւոր խօսքին մօտեցող լեզուով ու հեղինակային եսի անթաքոյց առատութեամբ թողնում է այն տպաւորութիւնը, թէ դա Մանազկերտի ժողովի աւարտից եւ ասորի վարդապետներին ճանապարհ դնելուց կարճ ժամանակ անց եւ «մէկ շնչով» շարադրուած (այսինքն՝ հետագայում յատուկ չսրբագրուած) մի իւրօրինակ հաշուետուութիւն է, ասես՝ կենդանի ընթերցելու համար նախորդ պատասխանատու ժողովի արդիւնքների ամփոփմանը եւ հետագայ անելիքների յստակեցմանը նուիրուած՝ իր համախոհների արդէն մէկ այլ հաւաքոյթում: Հմմտ. «Ահաւասիկ զայս գրեցաք կանոնս... ամենայն եպիսկոպոսաւք եւ